

ФЕНЯ ЕРВАНДЯН*Менеджмент, бакалавриат, 2-й курс***ВЛИЯНИЕ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ НА МОТИВАЦИЮ СТУДЕНТОВ В АРМЕНИИ****Ключевые слова:** студенты, ИКТ, дистанционное обучение, мотивация, вуз

В статье исследуется и анализируется дистанционное образование в Республике Армения и его влияние на мотивацию учащихся. Социологические опросы обобщают мнения и предложения студентов по дистанционному обучению.

FENYA YERVANDYAN*Management, Bachelor's Degree, 2nd Year***THE IMPACT OF DISTANCE EDUCATION ON STUDENT MOTIVATION IN ARMENIA****Keywords:** students, distance education, motivation, university

The article studies and analyzes distance education in the Republic of Armenia and its impact on student motivation. Sociological surveys summarize students' opinions and suggestions on distance learning.

ՄԱՐԻՆԵ ԹԱՄԵՅԱՆ*Հաշվապահական հաշվառում և հարկում, բակալավրիատ, 4-րդ կուրս***ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Հիմնաբառեր. ֆինանսական կայունության ցուցանիշներ, ՀՀ բանկային համակարգ, ՀՀ կենտրոնական բանկ, մակրոպրոդյուցիալ կարգավորում, ռիսկեր, տնտեսական նորմատիվներ

Հոդվածում դիտարկվել են «ֆինանսական կայունություն» հասկացությունը, դրա դերը ՀՀ բանկային համակարգում, բանկերի ֆինանսական կայունության գնահատման համար օգտագործվող ցուցանիշները և ՀՀ ԿԲ-ի կողմից ֆինանսական կայունության ապահովման համար կիրառվող քաղաքականությունը: Անդրադարձ է կատարվել ՀՀ բանկային համակարգի 2020 թ. ֆինանսական կայունությանը՝ կապված համավարակի և երկրում տիրող պարերազմական իրավիճակի հետ:

Ներածություն: Ֆինանսական կայունությունը ֆինանսական, մակրոտնտեսական և այլ պայմանների համադրությունն է, որի դեպքում ֆինանսական հաստատությունները, շուկաները և դրանց ենթակառուցվածքները կարող են դիմակայել հնարավոր մարտահրավերներին, ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառնությունների ընդհատման հավանականությունը: Ֆինանսական կայունությունը բնորոշելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական կայունություն կարող է առաջանալ ոչ միայն ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այլ նաև խոշոր փոխատուների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության փոփոխության, մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների դեպքում:

Յուրաքանչյուր տնտեսական համակարգի կարևորագույն գործոններից մեկը ֆինանսական հուսալի և արդյունավետ համակարգի առկայությունն է, որը հանդես է գալիս որպես ֆինանսական շուկաների և ֆինանսական ինստիտուտների ամբողջություն: ՀՀ ֆինանսական համակարգի հիմնական մասը կազմում է բանկային համակարգը, որը կարևոր դեր է խաղում ՀՀ տնտեսական համակարգում: ՀՀ բանկային համակարգն ընդգրկում է ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերը, դրանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները, գործառնական գրասենյակները, ինչպես նաև օտարերկրյա բանկերի՝ ՀՀ տարածքում գործող մասնաճյուղերը ու ներկայացուցչությունները: Ընդ որում, օտարերկրյա բանկի մասնաճյուղը գրանցվում է միայն ՀՀ ԿԲ-ում բացված համապատասխան հաշվում ԿԲ սահմանած՝ բանկերի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափով միջոցների առկայության դեպքում: ՀՀ ԿԲ-ում գրանցվելու պահից բանկը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ: Այնուհետև՝ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման մասին որոշում ընդունելուց հետո եռօրյա ժամկետում, հիմնադիրներին տրվում է գրանցման վկայական, իսկ հնգօրյա ժամկետում ծանուցվում ձեռնարկությունների գրանցումն իրականացնող պետական լիազորված մարմին՝ օտարերկրյա բանկի մասնաճյուղի գրանցման մասին համապատասխան գրառում կատարելու համար:

Գրականության ակնարկ: Համաձայն «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի՝ բանկն իրավաբանական անձ է¹, որն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով տրված լիցենզիաների հիման վրա իրականացնել բանկային գործունեություն:

Բանկային գործունեություն է համարվում ավանդներ ընդունելը, ավանդներ ընդունելու առաջարկությամբ հանդես գալը և ավանդն ընդունողի անունից և ռիսկով դրանք տեղաբաշխելը՝ վարկեր, ավանդներ, դեպոզիտներ տրամադրելու և ներդրումներ կատարելու միջոցով:

Առանց ՀՀ ԿԲ-ի կողմից տրված բանկային գործունեության լիցենզիայի ՀՀ տարածքում բանկային գործունեություն իրականացնելն արգելվում է: Ներկայումս ՀՀ-ում գործում են 17 առևտրային բանկեր, որոնք վերահսկվում են Կենտրոնական բանկի կողմից: ՀՀ-ում ֆինանսական կայունության ապահովման պատասխանատու մարմինը Կենտրոնական բանկն է, ինչն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 200-րդ հոդվածի 2-րդ կետով² և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» մասին օրենքի 4-րդ հոդվածով³:

ԿԲ-ի հիմնական խնդիրը ՀՀ-ում գների և ֆինանսական համակարգի կայունության ապահովումն է: Բացի իր հիմնական խնդրից, ԿԲ-ն ունի նաև այլ խնդիրներ⁴: Դրանց շարքին են դասվում.

- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելն ու զարգացնելը⁵,
- ՀՀ արժույթի թողարկումը, դրամաշրջանառության կազմակերպումն ու կարգավորումը,
- հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կազմակերպումն ու կար-

¹ Տե՛ս ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին», հոդված 4:

² <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=102510>

³ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121585>

⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, հոդված 200:

⁵ Տե՛ս ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», հոդված 5:

գավորումը,

- արժեթղթերում ներդրողների պաշտպանության, շուկայում արժեթղթերի արդար գնագոյացման համակարգի ձևավորման և պահպանման, արժեթղթերի արդար, թափանցիկ և վստահելի շուկայի կանոնակարգված և բնականոն գործունեության ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ բանկերի գործունեությունը կարգավորելու, ինչպես նաև ռիսկերի արդյունավետ կառավարման նպատակով Կենտրոնական բանկը կարող է սահմանել բանկային գործունեության նկատմամբ որոշակի հիմնական սահմանափակումներ՝ բանկերի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվներ: Բանկերի համար սահմանվող հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման կարգը, հաշվարկին մասնակցող տարրերի կազմը և սահմանաչափերը սահմանվում են ՀՀ ԿԲ խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ով:

Աղյուսակ 1

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոփոխական նորմատիվներ¹

Նորմատիվի անվանումը	Սահմանաչափը
Կանոնադրական կապիտալի նվազագույն չափը	50.000.000 ՀՀ դրամ
Բանկի համարժեքության նորմատիվները	30.000.000.000 ՀՀ դրամ
Ն1/1-հիմնական կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը	9 տոկոս
Ն1/2- ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը	12 տոկոս
Ն2/1-բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարի միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը	15 տոկոս
Ն2/2-բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցլափանջ պարտավորությունների միջև նվազագույն սահմանային հարաբերակցությունը	60 տոկոս
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և զուտ դրամական արտահոսքի միջև սահմանային հարաբերակցությունը	100 տոկոս
Բանկին հասանելի կայուն միջոցների և բանկին անհրաժեշտ կայուն միջոցների սահմանային հարաբերակցությունը	100 տոկոս
Ն3/1-մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	Ընդհանուր կապիտալի 20 տոկոս
Ն3/2-խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը	Ընդհանուր կապիտալի 500 տոկոս
Ն4/1-բանկի հետ կապված մեկ անձի գծով առավելագույն չափը	5 տոկոս
Ն4/2-բանկի հետ կապված մի քանի անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	20 տոկոս
Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց	Ներգրավված միջոցների 4 տոկոսի չափով
Արտարժույթով ներգրավված միջոցների դիմաց	Ներգրավված միջոցների 18 տոկոսի չափով
Ըստ առանձին արտարժույթների արտարժույթային ռիսկ	7 տոկոս
Համախառն արտարժույթային ռիսկ	10 տոկոս

Ըստ կանոնակարգ 2-ի՝ բանկերի համար կանոնադրական կապիտալի սահմանված նվազագույն չափը 50 մլն ՀՀ դրամ է, իսկ ընդհանուր կապիտալի

¹ Տե՛ս ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39 Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 2:

նվազագույն չափը՝ 30 մլրդ ՀՀ դրամ:

Մեթոդաբանություն: ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունությանը վերաբերող տվյալները վերցված են ՀՀ ԿԲ պաշտոնական կայքում առկա բաց հրապարակային նյութերից, որոնց հիման վրա իրականացվել է հետազոտություն՝ կիրառելով վերլուծության, խմբավորման, ընդհանրացման մեթոդները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում: 2007-2008 թթ.¹ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից հետո¹, ֆինանսական կայունության ապահովման խնդիրն ավելի կարևորվեց, քանի որ կազմակերպությունների որդեգրած քաղաքականությունը լիարժեք և բավարար կերպով չէր ապահովում ամբողջ ֆինանսական համակարգի կայունությունը, ռիսկերի արդյունավետ կառավարումը և մակրոտնտեսական կայուն միջավայր: Շատ երկրներում 2008 թ. ֆինանսական ճգնաժամը բանկային համակարգի միջոցով բացասական ազդեցություն ունեցավ տնտեսության վրա: Ֆինանսական կայունության ապահովման կարևորությունը հաշվի առնելով՝ մի շարք երկրներում ֆինանսական կայունության ապահովումը օրենսդրորեն ամրագրվել է որպես կենտրոնական բանկերի առաջնային նպատակներից մեկը:

Ի տարբերություն այլ երկրների՝ ՀՀ-ում, շնորհիվ ԿԲ-ի սահմանած խիստ նորմերի, ոչ մի բանկ չսնանկացավ, ինչը անխափան պահպանեց բանկային համակարգը և դրա հետ փոխկապակցված ոլորտների գործունեությունը: Կենտրոնական բանկի իրականացրած կարգավորումների շնորհիվ՝ ՀՀ բանկային համակարգը ներդաշնակորեն զարգացում է ապրել: Խիստ կարգավորումը, մի կողմից, թույլ չի տվել, որ բանկերի թիվն աստիճանաբար մեծանա, մյուս կողմից, զսպել է անկայունության՝ ընդունելի մակարդակից բարձրացումը:

Բանկային համակարգի ֆինանսական կայունության ապահովման հիմնասյունը ռիսկերի կառավարումն է, որը բաղկացած է հետևյալ հաջորդական փուլերից.

Աղյուսակ 2

Ռիսկերի կառավարման փուլերը

1. Իրադարձությունների բացահայտում
2. Իրադարձությունների ռիսկայնության աստիճանի գնահատում
3. Ռիսկերի կառավարման ռազմավարություն
4. Հսկողական գործիքների սահմանում

Հավանական ռիսկերի բացահայտման և զսպման նպատակով ՀՀ ԿԲ-ն շարունակաբար իրականացնում է ներքին և արտաքին միջավայրում ֆինանսական համակարգի և մակրոմիջավայրի ցուցանիշների վերլուծություն, շուկաների մշտադիտարկում, հայրենական վճարահաշվարկային համակարգերի հսկողություն: Այս փուլում ֆինանսական վերլուծության առարկա են ինչպես ֆինանսական համակարգի բաղադրիչները՝ ֆինանսական հաստատություններ, ֆինանսական ինստիտուտներ, ֆինանսական ենթակառուցվածքներ, ֆինանսական շուկաներ, այնպես էլ՝ մակրոտնտեսությունը: Ուսումնասիրվում են բոլոր այն գործոնները, որոնք ուղղակիորեն և անուղղակիորեն կարող են ազդել ֆինանսական համակարգի կայուն գործունեության վրա: Հավանական ռիսկերի դրսևորման դեպքում բանկային համակարգի խոցելիության մակարդակը գնահատելու նպատակով ՀՀ ԿԲ-ն կիրառում է սթրես-թեստեր, որոնք

¹ <https://www.cba.am/am/SitePages/fsintroduction-def.aspx>

միջազգային լայն տարածում ունեն։ Սթրես-թեստերը ներկայացնում են դիտարկելի շուկային սցենարների դեպքում բանկային համակարգի կամ դրա առանձին մասնակիցների վնասների գնահատում։ 2020 թ. սթրես-թեստերի արդյունքները փաստում են բանկային համակարգի՝ հետագա հնարավոր անբարենպաստ զարգացումների հետևանքներին դիմակայելու ներուժի առկայության մասին¹։ Կենտրոնական բանկը ֆինանսական համակարգի ռիսկերի կառավարումն իրականացնում է պրոդենցիալ և մակրոպրոդենցիալ քաղաքականությունների, ինչպես նաև ֆինանսական հաստատությունների վերահսկողության իրականացման միջոցով։ Պրոդենցիալ կարգավորումը ենթադրում է առանձին հաստատությունների համար նորմատիվային, կարգավորիչ որոշակի դաշտի սահմանում, որը թույլ կտա կառավարելի սահմաններում պահել առանձին ֆինանսական հաստատությանը վերաբերող ռիսկերը։

Մակրոպրոդենցիալ քաղաքականությունը նշանակում է պրոդենցիալ գործիքների կիրառում, սակայն այս դեպքում ապահովում է ամբողջ ֆինանսական համակարգի կայունությունը։

Մակրոպրոդենցիալ քաղաքականության կիրառման նպատակը համակարգային ռիսկերի նվազեցումն է և ֆինանսական միջնորդության անընդհատության ապահովումը։ Ֆինանսական կայունության գնահատման համար կարևորագույն գործիք է Արժույթի միջազգային հիմադրամի (ԱՄՀ) մշակած ֆինանսական կայունության ցուցանիշների համակարգը։

Ֆինանսական կայունության ապահովման գործառույթն իրականացնելու համար Կենտրոնական բանկն ունի մի շարք գործիքներ, որոնք ներկայացված են աղյուսակ 3-ում։

Աղյուսակ 3

ՀՀ կենտրոնական բանկի կողմից կիրառվող ֆինանսական կայունության ապահովման գործիքները

1.	Ռիսկերի վերլուծություն և գնահատում
2.	Շուկայի մասնակիցների ռիսկերի ընկալմանը, տեղեկացվածության բարձրացմանն ու շահերի պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում
3.	Գործառնություններ ֆինանսական շուկաներում և անհրաժեշտության դեպքում իրացվելիության տրամադրում
4.	Լիցենզիայի տրամադրման գործընթաց
5.	Վերջինի ատյանի վարկատուի գործառույթի կիրառում
6.	Ֆինանսական կայունության հանձնաժողով

Ֆինանսական կայունության և հատուկ կարգավորման հանձնաժողովը Կենտրոնական բանկի նախագահին կից խորհրդակցական մարմին է, որն իրականացնում է ֆինանսական համակարգի կայունության գնահատում, դրա ապահովմանն ուղղված միջոցառումների քննարկում, նախապատրաստում իրականացմանն ուղղվածությունների և պայմանների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, այլ գործողություններ։

Ինչպես նշեցինք, ֆինանսական կայունության գնահատման կարևորագույն գործիք են ֆինանսական կայունության ցուցանիշները։ Ֆինանսական կայունության ցուցանիշները երկրի ֆինանսական համակարգի, դրա կորպորատիվ հատվածի և տնային տնտեսությունների ֆինանսական բնութագրիչների վիճակագրական ցուցանիշների ամբողջությունն է։ Ցուցանիշները մշակվել են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից՝ այլ միջազգային կառույցների

¹ <https://www.cba.am/arm/SitePages/fsreport.aspx>, էջ 47

և ԱՄՀ անդամ երկրների օժանդակությամբ: Ցուցանիշների համակարգի ստեղծումը պայմանավորված է միջազգային մասշտաբով բոլոր երկրների ֆինանսական կայունության ցուցանիշների համադրելի դաշտ ունենալու և վերլուծաբանների համար այդ համադրելիության անհրաժեշտությամբ: Ներկայումս աշխարհի բոլոր երկրների ֆինանսական կայունության ցուցանիշները տեղադրված են ԱՄՀ էլեկտրոնային կայքում¹: Ֆինանսական կայունության ցուցանիշների միջոցով իրականացվում են մակրոպրոդենցիալ վերլուծություններ, գնահատվում են առանձին երկրների ֆինանսական համակարգի ուժեղ և թույլ կողմերը: Բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշներն են².

- նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
- նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին,
- չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին,
- շահութաբերությունը՝ ըստ ակտիվների,
- շահութաբերությունը՝ ըստ կապիտալի,
- բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին,
- բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին:

Աղյուսակ 4

ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունության ցուցանիշները 2021 թ. ապրիլ-հոկտեմբեր ժամանակահատվածում

	Ժամանակաշրջան	Ապր. 2021	Մայ. 2021	Հուն. 2021	Հուլ. 2021	Օգոս. 2021	Սեպ. 2021	Հոկ. 2021
1001	Նորմատիվային հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին	16.8	16.8	17.0	17.1	17.1	17.2	17.4
1002	Նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին	14.6	14.6	14.8	15.0	15.1	15.3	15.4
1004 ²	Չաշխատող վարկերի հարաբերությունը ընդհանուր վարկերին	4.6	4.2	4.1	3.8	3.4	2.96	2.78
1006 ¹	Շահութաբերությունը՝ ըստ ակտիվների	0.7	0.8	0.8	0.8	0.8	0.87	0.98
1007 ¹	Շահութաբերությունը՝ ըստ կապիտալի	5.1	6.2	6.3	5.8	6.2	6.58	7.51
1010	Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին	27.8	28.8	30.8	31.4	31.7	31.7	32.1
1011	Բարձր իրացվելի ակտիվների հարաբերությունը ցպահանջ պարտավորություններին	116.8	119.0	122.1	122.3	121.7	120.1	123.5

Ընդ որում նշենք, որ բանկային համակարգի կայունությունը գնահատող մեկ ընդհանրական ցուցանիշ գոյություն չունի:

ՀՀ կենտրոնական բանկը տարեկան և կիսամյակային պարբերականությամբ հրապարակում է ֆինանսական կայունության հաշվետվություն³: Այդ հաշվետվությունները կառուցված են գլոբալից դեպի մասնավոր տրամաբանությամբ: Ֆինանսական կայունության հաշվետվության հիմնական նպատա-

¹ data.imf.org

² <https://www.cba.am/am/SitePages/fsindicators-FSI.aspx>

³ <https://www.cba.am/arm/SitePages/fsreport.aspx>

կը իրական և ֆինանսական հատվածներում սպասվող, ինչպես նաև նախկին զարգացումների համատեքստում երկրի ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերի բնույթը նկարագրելն է: Հաշվետվությունում ներկայացվում են որոշակի ժամանակահատվածի համար ֆինանսական կայունության վերաբերյալ Կենտրոնական բանկի գնահատականը, առկա ռիսկերը, ինչ միջոցառումներ են իրականացվել դրանց կանխարգելման և չեզոքացման համար: Այն սովորաբար բաղկացած է *համաշխարհային տնտեսության զարգացումները, Հայաստանի մակրոտնտեսական միջավայրի զարգացումները, Հայաստանի ֆինանսական շուկայի կայունությունը, ՀՀ ֆինանսական հաստատությունների կայունությունը, ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներում* բաժիններից: ՀՀ ֆինանսական կայունությանը սպառնացող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են հետևյալ հիմնական ուղղություններով.

- համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցված ռիսկեր,
- ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցված ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական շուկայի ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական հաստատությունների ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքների ռիսկեր:

Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում ռիսկերի կուտակումները, հնարավոր ազդեցությունները տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների վրա, ինչպես նաև ռիսկերի հասցեագրմանն ուղղված՝ ՀՀ ԿԲ-ի կողմից իրականացված մակրոպրոտեկցիալ քաղաքականությունը: Ֆինանսական կայունության հաշվետվությունում կարևորվում են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացման ուղղությունները, քանի որ ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 84%-ը առևտրային բանկերի ակտիվներն են, հետևաբար ֆինանսական կայունության մակարդակը և զարգացման ուղղությունները պայմանավորված են բանկային համակարգի գործունեությամբ:


Բանկային համակարգի ֆինանսական կայունությունը համավարակի և պատերազմի պայմաններում

2020 թ. ՀՀ տնտեսությունը կրեց միմյանց հաջորդող 2 աննախադեպ շուկեր՝ կապված համավարակի և ռազմական դրության հետ: Վերջիններս այնպիսի մարտահրավերներ են ստեղծել ֆինանսական համակարգի համար, որոնք տարբերվում են մինչ այդ արձանագրված բոլոր ճգնաժամներից: Սակայն, նույնիսկ այս պարագայում ֆինանսական համակարգը տարվա ընթացքում պահպանել է գործունեության անընդհատությունը՝ ի հաշիվ ձևավորված կապիտալի և իրացվելիության բավարար ներուժի, ինչը նախադրյալներ է ստեղծում հնարավոր կորուստները կլանելու և գործունեության անընդհատությունն ապահովելու համար: Բանկերը շարունակել են մատուցել բանկային ծառայություններ՝ առաջնությունը տալով հեռավար ծառայությունների հասանելիությանը և հաճախորդների տեղեկացվածության մակարդակի բարձրացմանը: Առևտրային բանկերի առաջարկած վարկային արձակուրդները և վարկերի պայմանների վերանայումները համավարակից տուժած վարկառուներին հնարավորություն են տվել իրենց պարտքի սպասարկման բեռը վերաբաշխելու ապագա ակնկալվող եկամուտներին համարժեք:


Կապիտալի համարժեքությունը և եկամտաբերությունը 2020 թ.

Բանկային համակարգը մշտապես պահպանել է պահանջվող նվազագույն սահմանաչափը գերազանցող կապիտալի համարժեքությունը¹: Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը տարվա ընթացքում նվազել է 0,6 տոկոսային կետով և կազմել է 16,9%:

Համարժեքության նվազումը պայմանավորված է գործունեության ծավալների ավելացմամբ, ինչպես նաև ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկման հետևանքով ռիսկով կշռված արտարժույթային ակտիվների դրամային համարժեքի աճով (գծապատկեր 1)²:



Գծապատկեր 1. Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը, 31.12.2021



Գծապատկեր 2. Ռիսկերի կուտակումների աճը

Ինչպես արդեն նշեցինք, մակրոպրոդենցիալ քաղաքականության իրականացրած միջոցառումները հիմնականում ուղղված են բանկային համակարգի՝ ռիսկերին դիմակայելու ունակությանը, դրա ամրապնդմանը և ֆինանսական միջնորդության անընդհատության ապահովմանը: Այժմ անդրադառնանք մակրոպրոդենցիալ ռիսկերի քարտեզին: Քարտեզը բաղկացած է 23 ցուցանիշներից, որոնք դասակարգվում են 2 հիմնական խմբերի՝ ռիսկի աղբյուրներ և ռիսկերի կլանման ունակություն³: Ռիսկերի կուտակումը բնութագրող հատվածը ներկայացնում է համակարգային ռիսկերի կուտակումները՝ ըստ առանձին աղբյուրների, որոնց նյութականացման դեպքում բանկային համակարգի կայունությունը կարող է վտանգվել: Ռիսկերի կլանման ունակությունը

¹ <https://www.cba.am/arm/SitePages/fsreport.aspx>

² https://www.cba.am/AM/ppperiodicals/Stability%20report_2021.pdf էջ 33

³ <https://www.cba.am/arm/SitePages/fsreport.aspx>, էջ 9

բնութագրող հատվածը ներկայացնում է համակարգի կողմից ռիսկերի կլանման ունակությունը՝ իրացվելի միջոցների, կապիտալի բարձիկների առկայությունը: Գունային լուծումները (5 գույն) ներկայացնում են (0.1) միջակայքի բաժանումը 5 հավասարաչափ միջակայքերի: Դեպի կարմիր գույն ուղղությունը փաստում է, որ կա ռիսկի աճ, իսկ կանաչը՝ նվազում: 2020 թ. երկրորդ կեսին ռիսկերի կուտակման աճ է արձանագրվել՝ պայմանավորված համավարակի հետևանքով տնտեսական անկմամբ, ինչպես նաև անորոշությունների աճող մակարդակով:

Մակրոռիսկեր խմբի ամփոփ ցուցանիշի մակարդակն աճել է, ինչին նպաստել են տնտեսական խոր անկումը և պետական պարտքի աճի ցուցանիշները: Կրճատվել են նաև դրամական փոխանցումները, ինչը կապված է գործընկեր երկրների տնտեսական ակտիվության նվազման հետ, և նպաստել են ամփոփ ցուցանիշների աճին: Դրական ազդեցություն են ունեցել նաև ցածր գնաճը և «ընթացիկ հաշվի պակասուրդի» կրճատումը:

Վարկային ռիսկի կուտակման ցուցանիշը պահպանվել է գունային նույն մակարդակում, որը նշում է ռիսկերի կուտակման առկայությունը: Բարձր ռիսկի կուտակում է ներկայացնում տնային տնտեսությունների վարկեր/համախառն ազգային տնօրինվող եկամուտ հարաբերակցությունը: Ռիսկերի կուտակման աճ դրսևորվել է նաև ձեռնարկությունների վարկավորման մասով, որին նպաստել է պետական աջակցության ծրագրերով վարկավորման աճը: Վարկային ռիսկի կուտակման ցուցանիշի գունային մակարդակը պայմանավորված է նաև վարկային ներդրումների աճի տեմպի նվազմամբ, ինչը թուլացնում է ռիսկերի կուտակումը: Ընդ որում, մակրոպրոդենցիալ ռիսկերի քարտեզում ներառված չէ ցուցանիշ, որը կբնութագրեր վարկերի վերանայումների ու վարկային արձակուրդների ազդեցությունը:

Շուկայական ռիսկերի ենթախմբում ռիսկերի կուտակման նվազումը պայմանավորված է անշարժ գույքի գների և արտարժույթային վարկերի աճի տեմպի նվազմամբ:

Իրացվելիության ռիսկի ենթախմբում նկատվել է ռիսկերի կուտակման աճ, որը պայմանավորված է միջբանկային պարտավորությունների աճով և ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշի նվազմամբ: ԿԲ-ի իրականացրած օպերատիվ միջոցառումների շնորհիվ բանկային համակարգին հաջողվել է դիմակայել իրացվելիության ճնշումներին:


Ֆինանսական համակարգի կողմից հավանական ռիսկերը կլանելու ունակությունը բնութագրող ամփոփ ցուցանիշը չի փոփոխվել՝ պայմանավորված կապիտալի համարժեքության և շահութաբերության ցուցանիշների մակարդակի պահպանմամբ: Ռիսկերի կուտակման աճի պարագայում կարևորվում է ռիսկերի կլանման ամփոփ ցուցանիշի բարելավումը՝ ապահովելով բանկային ռիսկի դիմացկունությունը, գործընթացների անընդհատությունը՝ հավանական ռիսկերի նյութականացման դեպքում:

Այժմ անդրադառնանք համավարակով և պատերազմական իրավիճակով պայմանավորված փոփոխություններին, որոնք էականորեն ազդել կամ ազդելու են բանկային համակարգի վրա:

Վերջին 4 տարվա կտրվածքով չաշխատող ակտիվների (վարկերի) մակարդակը հասել է առավելագույնի: Համաձայն Կենտրոնական բանկի տվյալների՝ 2021 թ. վերջի դրությամբ չաշխատող ակտիվների կամ, այսպես կոչված, դասակարգված վարկերի մասնաբաժինը առևտրային բանկերի ընդ-

հանուր ակտիվների կառուցվածքում հասել է 7,01%-ի, ինչն ամենաբարձր ցուցանիշն է 2017 թ. տարեսկզբից ի վեր, երբ սահմանվեց նորմատիվային կապիտալի նոր շեմ (30 մլրդ): Բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն աճել է գրեթե բոլոր ոլորտներում, ինչը պայմանավորված է և՛ համավարակի, և՛ պատերազմի ազդեցությամբ: Այսքանով, սակայն, պատերազմի ազդեցությունը չի սահմանափակվում, Հայաստանում գործող բանկերը ակտիվորեն մասնակցում էին նաև Արցախի տնտեսության այլ ոլորտների և ֆիզիկական անձանց վարկավորման ծրագրերին, ավելին՝ 17 բանկից 7-ը ունեին նաև մասնաճյուղեր Արցախում, հետևաբար՝ Արցախի բնակչության ու կազմակերպությունների վարկային պարտավորությունների մարումների, ինչպես նաև պատերազմում հաշմանդամ դարձած կամ զոհված անձանց վարկային պարտավորությունների մասնակի կամ ամբողջական ներման հարցը դեռևս զգալի ազդեցություն է ունենալու բանկերի ֆինանսական ցուցանիշների վրա:

Վերջին տարիներին, հատկապես 2018-ի ապրիլյան իրադարձություններից հետո, բնակչության դրական սպասումները հանգեցրել էին վերջնական սպառման էական աճի, այդ թվում՝ սպառողական վարկերի: 2017-ի դեկտեմբերի 31-ի համեմատ՝ 2018-ի տարեվերջին բանկերի տրամադրած սպառողական վարկերի ծավալն աճել էր 37%-ով: Այս բարձր աճի տեմպը պահպանվել էր նաև 2019-ին (31%), սակայն մասնագիտական շրջանակները և Կենտրոնական բանկը բազմիցս շեշտել են, որ աճի այդպիսի միտումները մտահոգիչ են և նախատեսում են քայլեր ձեռնարկել սպառողական վարկերի աճի տեմպերը զսպելու համար:




Գծապատկեր 3. ՀՀ առևտրային բանկերի կողմից տրամադրված սպառողական վարկերը 2016-2020 թթ. (մլրդ ՀՀ դրամ)

2020 թ. տարեսկզբին համավարակով պայմանավորված *տնտեսական ճգնաժամը հանգեցրեց բնակչության տնօրինվող եկամտի կտրուկ անկման, և բանկերն սկսեցին ավելի զգուշավոր լինել սպառողական վարկավորման հարցերում*, արդյունքում 2020-ին սպառողական վարկերի աճի տեմպը կտրուկ դանդաղեց (1,4%), և սպառողական վարկերի պորտֆելի ընդհանուր մեծությունը տարեվերջի դրությամբ կազմեց 929 մլրդ ՀՀ դրամ:

Հակաճգնաժամային ծրագրերի շրջանակում վարկի տոկոսի մասնակի կամ ամբողջական սուբսիդավորումը նպաստել է վարկային պորտֆելի աճին: ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելը 2020 թ. տարեվերջի դրությամբ կազմել է շուրջ 4 տրիլիոն ՀՀ դրամ, ընդ որում՝ աճի տեմպը պահպանվել է բարձր մակարդակում: Ավելին, առևտրային բանկերի վարկային

պորտֆելի շարժընթացի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մշակող արդյունաբերության, գյուղատնտեսության ոլորտներում վարկային պորտֆելները ոչ միայն աճել են, այլև աճել են ավելի մեծ տեմպով, քան 2019-ին, ինչը, թերևս, մասամբ պայմանավորված է կառավարության հակաճգնաժամային միջոցառումներով, մասամբ՝ տնտեսավարողների ֆինանսական դրության վատթարացմամբ: Համաձայն ՀՀ Կառավարության տվյալների՝ 2020-ի սեպտեմբերի վերջի դրությամբ ՀՀ բանկերն այդ միջոցառումների շրջանակում տրամադրել են 119 մլրդ ՀՀ դրամի վարկեր, իսկ միայն գյուղատնտեսության ոլորտում՝ 43,1 մլրդ ՀՀ դրամի:



Գծապատկեր 4. ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի շարժընթացը՝ ըստ վարկավորման խոշոր ոլորտների, 2018-2020 թթ. (մլրդ ՀՀ դրամ)

Ինչպես երևում է գծապատկեր 4-ից, առաջանցիկ տեմպերով աճ է արձանագրվել նաև հիպոթեքային վարկավորման ոլորտում: Այս պարագայում վարկային պորտֆելի աճը պայմանավորված է այն մտավախությամբ, որ հնարավոր է՝ կառավարությունը չեղարկի առաջնային շուկայից բնակարանի ձեռքբերման վարկի տոկոսագումարի հետվերադարձի ծրագիրը, ինչը հանգեցրել է պահանջարկի էական աճի:

Ապագայի նկատմամբ անորոշությունը «ստիպում» է մարդկանց խնայել: Տնտեսագետների շրջանում հայտնի փաստ է, որ ապագայի նկատմամբ անորոշությունը տնային տնտեսություններին «ստիպում» է խնայել: Կորոնավիրուսային ճգնաժամը ևս մեկ անգամ եկավ հաստատելու այդ հայտնի փաստը: Այս առումով Հայաստանը բացառություն չէ: 2020-ի օգոստոսին ռեզիդենտ տնային տնտեսությունների ցպահանջ և ժամկետային ավանդների մեծությունը հասել է իր պատմական առավելագույնին՝ գերազանցելով 1,7 տրիլիոն ՀՀ դրամի շեմը, միայն դրամային ավանդները հուլիսի համեմատ աճել են շուրջ 12 մլրդ ՀՀ դրամով: Հայաստանում նման իրավիճակ արձանագրվել է նաև 2009-ին:

Եզրակացություն: Այսպիսով, կատարված ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ֆինանսական կայունության ապահովումը Կենտրոնական բանկի հիմնական խնդիրներից մեկն է (գների կայունության ապահովման խնդրին զուգահեռ), որն ընդհանուր մակրոտնտեսական կայունության կարևորագույն բաղադրիչ է և երկարաժամկետ կայուն տնտեսական աճի նախապայման: Ֆինանսական կայունության խնդրի ներքո մշտադիտարկվում և գնահատվում են ինչպես ֆինանսական համակարգում, այնպես էլ ներքին ու արտաքին մակրոտնտեսական զարգացումների արդյունքում ֆինանսական համակարգի կայունությունը վտանգող հավանական ռիսկերը, դրանց հնարավոր ծագման աղբյուրները: Այդ ռիսկերի համապարփակ վերլուծության և ֆինանսական

կայունության վրա դրանց հնարավոր ազդեցության գնահատման արդյունքում մշակվում և իրականացվում է մակրոպրոդենցիալ քաղաքականություն:

Ինչպես արդեն նշեցինք, ԿԲ-ին որոշակի կերպով հաջողվել է պահպանել սպառողական վարկերի աճի տեմպը: Սակայն, մտահոգիչ է այն փաստը, որ չաշխատող վարկերի տեսակարար կշիռն աճել է, ինչը նշանակում է, որ վարկառուները հնարավորություն չեն ունեցել մարելու վարկերը, ինչի հետևանքով բանկերը չեն կարողանա մարել իրենց պարտավորությունները: Սա կհանգեցնի իրացվելիության ռիսկի ավելացմանը, ինչից էլ բխում է, որ ԿԲ-ն չի կարողանա ապահովել ՀՀ բանկային համակարգի ֆինանսական կայունությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»:
2. ՀՀ օրենքը «Բանկերի և բանկային գործունեության մասին»:
3. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.02.2007 թ. թիվ 39 Ն որոշմամբ հաստատված կանոնակարգ 2:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
5. <https://www.cba.am/am/SitePages/fsintroduction-def.aspx>
6. <https://www.cba.am/am/SitePages/fsindicators-FSI.aspx>
7. data.imf.org
8. <https://www.cba.am/arm/SitePages/fsreport.aspx>

МАРИНЕ ТАМЕЯН

*Бухгалтерский и налоговый учет,
бакалавриат, 4-й курс*

ФИНАНСОВАЯ СТАБИЛЬНОСТЬ БАНКОВСКОЙ СИСТЕМЫ РА

Ключевые слова: показатели финансовой стабильности, банковская система РА, Центральный банк, макропруденциальная политика, риск, экономические нормы

Основная цель данной статьи – представить читателю понятие финансовой стабильности, его роль в банковской системе РА, показатели для оценки финансовой устойчивости банков, политику, применяемую ЦБ для обеспечения финансовой стабильности. В статье рассматривается финансовая стабильность системы РА в 2020 году в связи с войной и военной ситуацией в стране.

MARINE TAMEYAN

*Accounting and Auditing,
Bachelor's Degree, 4th Year*

ANALYSIS OF FINANCIAL STABILITY OF THE BANKING SYSTEM OF THE REPUBLIC OF ARMENIA

Key words: financial soundness indicators, bank system of RA, Central bank, Macroprudential policy, risk, economic norms

The main objective of this article is to present the concept of financial stability, what role it plays in the RA bank system, what indicators are used to evaluate banks' financial stability, and what policies the CB uses to ensure financial stability. The article observes financial stability of the RA system in 2020 which was affected by the pandemic and war situation in the country.